

## ՆԵՐՔԻՆ ՀՈՒՄԱՐ

■ Մի խումբ գրականագէտներ Աղքիւր-Տարազի խմբագիր պ. Ֆիգրան Նազարեանի հրաւէրով ժողովրած նորա մօտ, որոշեցին հիմք դնել գրականագէտների միութեան, որի նպատակն է հայ գրագէտներից, առանց խորութեան ուղղութիւնների և բազաքական դաւանանքների, կազմել մի գերգաստան՝ Միութեան կանոնագիրը կազմելու համար հրաւիրուած է մի առաւել բազմամարդ ընդհանուր ժողով:

■ Մեր առաջնակարդ եկեղեցականներից մէկը, Տ. Սուքիս արքեպիսկոպոս Պարզիանը, որ իշխ. Գօլիցինի ժամանակ աքսորուած էր Օրէնքուրք Հալոց եկեղեցական կալուածների գրաւման ժամանակ, անցեալ նոյնքերին վերադարձաւ աքսորից և մեկնեց ս. Էջմիածին, Սրբազնը քաջառողջ է և պահպանել է գործելու իրեն յատուկ աշխոյժն ու հոանգը:

■ Մեր աշխատակից Հ. Բենիկ Վարդապետը, տասն հրկար ամիսներ Թիֆլիսում անգործ մնալուց յիտոյ, ուր հրաւիրուած էր իբրև քարողիչ աւագ եկեղեցու ս. Առաջնորդի, վանրի միաբանութեան և պ. երեցփոխանի ցանկութեամբ և Վեհ. Հայրապետի յատուկ հաճութեամբ, այժմ նշանակուեց Բեսարաբիայի թեմի դպրոցական գործի ղեկավար, համաձայն հեռագրական առաջարկութեան Բեսարաբիայի թեմի առաջնորդ Տ. Ներսէս արքեպիսկոպոսի: Թէ ինչո՞ւ Հ. Բենիկ Վարդապետին զլացուեցաւ Տիֆլիսում խոստացուած պաշտօնը, որի ոռնիկն իսկ նշանակել էր իւր կողմից բարեգործ պ. Աղ. Մանթաշեանը, այդ մեզ համար մութ մնաց. այսքանը միայն լսել ենք, որ Վեհափառը դժգոհ է մնացել գործի այդ ելքից:

■ Մենք ստացել ենք հրատարակութեան համար էջմիածնի ճեմարանի մի քանի նախկին աշակերտներից նամակներ ի պաշտպանութիւն ճեմարանի նախկին տեսուչ պ. Կ. Կոստանեանի, որպէս պատասխան տեղույս մի քանի լրագիրներուաերևցած աննպաստ յօդուածների, բայց առ այժմ վաղաժամ ենք համարում տպել: Ցանկալի է որ նախապէս խօսեն պ. Կոստանեանի հետ երկար ժամանակ պաշտօն վարող ուսուցիչներ և նորա աշակերտ-վարդապետները:

■ Նորերս, բժշկապետ պ. Բագ. Նաւասարդեանի նախաձեռնութեամբ մի ստուար խումբ զանազան դասակարգի անձինքների հիմնեց մի նոր կուսակցութիւն «Հայկազեան քաղաքակրթական միութիւն» անումնով, որի դրոշակի ներքոյ մըտնում են այն բոլոր հայերը, որոնք ընդունելով Ռուսիոյ Կայ-

սեր հոկտեմբեր 17-ի ազատարար հրովարտակը՝ կջանան իրաւոցրձել նորան կեանքի մէջ սոսկ խաղաղ ճանապարհով, մօտենալով իրանց ծրագրով կօնստիտուցիօննօ-դէմոկրատ կուսակցութեան ուղղութեան, նայած մեր ազգային շահերին նոր կուսակցութիւնը կովկասը համարելով բնաշխարհ մեր և մեր հարեանների, ոչ ի բաց առեալ և կովկասեան ոսներին, պիտի կապուի նոցա հետ համերաշնութեամբ, առաջն առնէ հայ գաղթականութեան. նորա քաղաքականութիւնը պիտի լինի՝ ազգեկեղեցու անկախութիւնը, լեզուի ազաւութիւնը, բարեգործական ընկերութիւնների և ուսումնարանների ազատ պահպանութիւն և վերջապէս Տաճկաստանի և այլ հայերի բարենորոգման ինդիբը, բայց այս ամենը միմիայն կուլտուրական խաղաղ ճանապարհով:

— Տարին նոր է սկսում և արդէն բազմաթիւ տեղերից, մանաւանդ Պարսկաստանի խորքերից դիմում են մեզ և խնդրում ձրիաբար «Լումաւ» ուղարկել այնտեղի գրադարաններին, մատնացոյց տնելով իրանց աղքատին վիճակը: Խմբագրութիւնս ուղարկում է որչափով որ Համարաւոր է համարում, բայց ամենքին օգնութեան հասնել անկարող է, մանաւանդ այս տարին, երբ ազգային աղէտների պատճառով, բաժանորդագրութիւնը կաղի կաղէ ընթանում: Ուստի միւններին բաւարարութիւն կտանք, երբ բարեսէր մարդիկ «Հումայշ» աւելորդ օրէնսակներ կթողնեն խմբագրութեանս տնօրինութեան:

### ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԴՐՈՒԹԵԱՆ

#### I.

Գրիգորիս քահանայ Երզնկեանցը մեր կոնսիստորիայի ծառայողներիցս ըուկոտի արժանանալուց յետոյ գրել էր, որ կոնսիստորիալի ծառայողներս վարակուած ենք կաշառակերութեամբ, ծծում ենք ժողովրդի հիւթը և անփոյթ ենք մեր գործավարութեան մէջ: Մենք պատրաստեցինք մի ընդարձակ պատասխան այլ զրպարտութեան դէմ միառմի հերքելով բոլոր կէտերը և ընդհակառակը ցոյց տուինք նորա մըտցրած այն նոր եւ թարմ հոսանքը, որ բանդելով կոնսիստորիայի իշաւանց ու արդարութեան թումբը՝ տգէտ, անուս և թերուս տիրացուների մերժուած գործերը առաւ ու տարաւ, քչեց ու հասցըեց, հանեց մինչև մինօդ ձեռնադրելու համար: Այս ամենը ապացուցուած էր փաստական կերպով. և որովհե-